

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 1396 - Ա

ք. Երևան

«15» հունիս 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՂԵՐԻ
ՊԱՏՇԱՃ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՂԵՐԻ ՊԱՏՇԱՃ
ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

5204/12.06.12
335

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 734 -Ն որոշմամբ հաստատված «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու» ժամանակացույցի 6-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի հուլիսի 8-ի N1325-Ա հրամանով հաստատված «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի ցանկ»-ի 8-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի» N 1300-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության» 12-րդ կետի «դ» ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝
 - 1) Ապահովել Հայաստանի Հանրապետության դեղերի պատշաճ արտադրական գործունեությունը և դեղերի պատշաճ բաշխման գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի ներդաշնակությունը Եվրամիության համապատասխան իրավական ակտերի հետ:
 - 2) Իրականացնել Եվրամիության դեղերի պատշաճ արտադրական գործունեության և դեղերի պատշաճ բաշխման գործունեության վերաբերող իրավական ակտերի, ինչպես նաև «Դեղագործական տեսչությունների

Տեղեկ 18.06.12 Ն. 09¹⁰ Սեբ

համագործակցության սխեմա» միջազգային կազմակերպության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության համապատասխան ուղեցույցների մշտական ռաումնասիրություն և կիսամյակը մեկ անգամ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին ներկայացնել առաջարկներ Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտի իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Հ. ՔՈՒՇԿՅԱՆ